Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ

Ծրագրի Էներգաաուդիտի և էներգախնայողության փորձագետի ընտրություն

Ժամկետ կարճաժամկետ, 45 օր (ժամկետի երկարացման հնարավորությամբ)

Ծրագրի մասին: Տեղական ինքնակառավարման բարեփոխումների 5 տարվա ծրագիրը սկսվել է 2015թ. օգոստոսին և իրականացվում է ԱՄՆՄԶԳ-ի և ՀՀ կառավարության համաձայնագրի շրջանակներում/ներքո: Ծրագիր նպատակն է՝ աջակցել ՀՀ կառավարությանը իրականացնել վարչատարածքային խոշորացման գործնթացը երկրի մի շարք խոշորացված պիլոտային համայնքներում: Տարածքային տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագիրը կիրականացվի ՀՀ Տարածքային հիմնադրամի կողմից: Սույն 5 տարվա ծրագիրը կնպաստի համայնքային ծառայությունների բարելավմանը, ինչպես նաև կստեղծի համայնքային տնտեսական զարգացմանը նպաստող նախապայմաններ: Առաջիկա ծրագրերը կկիռավեն Թումանյան, Դիլիջան և Տաթև համայնքներում:

Ծառայության շրջանակը, նշանակման նպատակը

Էներգաաուդիտի և էներգաարդյունավետության փորձագետը ծրագրի աշխատանքային խմբի ղեկավարի համակարգմամբ պատասխանատու կլինի ծրագրի էներգետիկ և տնտեսական մասի վերլուծության և արևային կայանի կառուցման նպատակով հայտարարվող գնման տեխնիկական առաջադրանքի համար՝ Նոկեմբերյան և Կողբ խոշորացված համայնքներում: Պայմանագրի ժամկետը՝ 45 օր:

Պատասխանատվության շրջանակ, նկարագիր

- Նոյեմբերյան և Կողբ համայնքների հանրային սեկտորի էներգետիկ սպառման գնահատման իրականացում:
- Անհրաժեշտ լուծումների հատուկ չափորոշիչներ մշակում՝ հիմնված դրանց տեխնիկական բնութագրերի վրա
- Համայնքային նշանակության օբյեկտների էներգիայի և էներգաարդյունավետության միջոցառումների ծախս-օգուտների վերլուծություն
- Նախատեսվող օբյեկտների համար էներգետիկ արդիականացման ծրագրի մշակում՝ համապատասխան տեխնիկական և տնտեսական հաշվարկներով և առաջարկվող տեխնոլոգիական փոխակերպմամբ
- Ընտրված օբյեկտների համար նախատեսվող ապրանքների և ծառայությունների համար տենխնիկական առանձնահատկությունների (առաջադրանք) մշակում, գնման փաթեթների տեխնիկական օժանդակություն
- Հայտատուների տեխնիկական առաջարկների գնահատում
- Ուսումնասիրության անցկացման, արդյունքների գնահատման, մասնակիցների համար ձևանմուշի և այլ տեխնիկական առաջադրանքի մշակում
- Համայնքներ այցելությունների հյուրանոցային և տրանսպորտային ծախսերը հոգում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը:

Ակնկալվող արդյունքներ

- Օբյեկտների պարզ էներգետիկ աուդիտներ՝ ներառյալ նախատեսվող վերականգնվող էներգետիկ միջոցառումների ծախսերի օգուտների վերլուծությունը
- Օբյեկտների լուսավորության համակարգերի մանրամասն էներգետիկ աուդիտի վերաբերյալ հաշվետվություն՝ ներառյալ նախատեսվող էներաարդյունավետ լուսավորության միջոցառումների ծախսերի օգուտների վերլուծությունը
- Գնումների իրականացման գործընթացում արևային կայանների տեղադրման ծառայությունների և ապրանքների ձեռք բերման տեխնիկական առաջադրանքի կազմում

Փորձագետի պահանջվող որակավորումները

- Ճարտագիտության ոլորտի բուհական աստիճան
- Էներգաարդյունավետությանը և վերականգնվող էներգետիկային առնչվող միջոցառումների նախագծման և կիրառման աշխատանքային փորձ
- Արևային կայանների տեղադրման, էներգետիկ աուդիտի անցկացման փորձ, ինչպես նաև միջազգային ստանդարտների և փորձի իմացություն
- Հայաստանում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի քաղաքականության և իրավական դաշտի իմացություն
- Վերլուծությունների իրականացման և հաշվետությունների ներկայացման հմտություններ
- Հայերենի և անգլերենի իմացություն:

Ինքնակենսագրականները պետք է ներկայացվեն էլ-փոստով՝ atdf@atdf.am հասցեով, ոչ ուշ քան **2019թ. հունվարի 29-ը, ժամը 17:00-ը:**